ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

19 ապրիլի 2016 թվականի **թիվ 35** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի մի քանի ակտեր ուժը կորցրած ճանաչելու մասին

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) 48-րդ կետին եւ 43-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Ուժը կորցրած ճանաչել՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 12-ի «Մաքսային օրենսդրության կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի մասին» թիվ 256 որոշումը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի փետրվարի 11-ի «Մաքսային օրենսդրության կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի կազմում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 21 որոշումը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի ապրիլի 8-ի «Մաքսային օրենսդրության կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի կազմում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 50 որոշումը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 27-ի «Մաքսային օրենսդրության կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի կազմում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 39 կարգադրությունը.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի նոյեմբերի 17-ի «Մաքսային օրենսդրության կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի կազմում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 130 կարգադրությունը:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան